

## ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝

16.03.2022թ. կայացած նիստի

թիվ 7 արձանագրություն

### Օրակարգ

1. Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլանների հաստատում:
  2. Արտադրական /մասնագիտական/ պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների կազմակերպում:
  3. Ընթացիկ հարցեր :
- Գիտխորհրդի նիստին ներկա էին 36 անդամներից 29-ը:

1. ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը ողջունեց գործընկերներին և անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլանների հաստատմանը: Այդ հարցի առնչությամբ խոսքը փոխանցեց փոխդեկան Ն.Մադոյանին: Ն.Մադոյանը ասաց, որ ուսումնական պլաններում փոփոխություններ են տեղի ունեցել՝ որոշ ամբիոններում ժամերի կրճատումներ են եղել, որոշ պարտադիր առարկաներ դարձել են կամրնտրական: Այդ հանգամանքի արդյունքում էլ՝ շարժունության կրեդիտների իրականացումը պետք է կատարվի ծրագրի ղեկավարի/ամբիոնի վարիչի/ օժանդակությամբ: Այդ հարցի առնչությամբ ընդհանուր քննարկումներ տեղի ունեցան, մասնավորապես՝ ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Հ.Բաղդասարյանը մտահոգություն հայտնեց, որ իր բաժնում մոտ 700 ժամ պակասում է և ամբիոնը լուրջ խնդրի առջև է կանգնել, ինչը նաև սահմանափակում է ուսանողների ղրսում կրթություն ստանալու հնարավորությունը: Հարկ է նշել, որ բոլոր ամբիոնների վարիչները իրենց մտահոգությունները հայտնեցին իրենց ամբիոններում պակասող ժամերի վերաբերյալ: Հ.Բաղդասարյանը նշեց, որ եթե կրճատվում է երկրորդ մասնագիտական լեզվի ժամերը, այդ հանգամանքը, ինքնըստինքյան, մեծ հարված է հասցնում ֆակուլտետին: Ռոմանական բանասիրության մագիստրատուրայի ժամերը կրճատվում են միջմշակութային հաղորդակցության անզլերենի ամբիոնի և թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի կատարած փոփոխությունների արդյունքում: Հ.Բաղդասարյանը խնդրեց միջմշակութային հաղորդակցության անզլերենի ամբիոնի վարիչ Բ.Գ.Գ., պրոֆեսոր Շ. Պարոնյանին և թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ., դոցենտ Ռ. Ղազարյանին մշակել ընդհանուր փոխշահավետ մի որոշում, ինչը չի վնասի երեք ամբիոնների աշխատանքին: Միջմշակութային հաղորդակցության անզլերենի ամբիոնի վարիչ Բ.Գ.Գ., պրոֆեսոր Շ. Պարոնյանը արձագանքեց՝ տեղեկացնելով, որ ժամերի փոփոխությունը տեղի է ունեցել մասնագիտական անզլերենի առարկաների պատճառով և հավատացրեց, որ

համագործակցության արդյունքում իր ամբիոնի ֆրանսերենի, իսպաներենի և գերմաներենի ժամերը, դուրս չեն գալիս: Շ.Պարոնյանը հավելեց, որ իր ուսանողներին ուղորդելու է, որ յոթերորդ կիսամյակում վերցնեն և շարունակեն իսպաներեն, ֆրանսերեն, գերմաներեն լեզուները՝ որպես երկրորդ մասնագիտական օտար լեզու: Եվ դրա արդյունքում ուսանողը կիսատ չի թողնի երկրորդ մասնագիտական լեզվի ուսուցումը: Ռոմանական ամբիոնի մագիստրատուրայի ժամերը, այդ առումով, ըստ էության չի պակասում: Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ.Պոցենտ Ռ.Ղազարյանը արտահայտվեց, ասելով, որ յոթերորդ կիսամյակում մասնագիտական առարկաները կազմում են տասնինը կրեդիտ, ինչը իրենից ենթադրում է, որ իր ամբիոնը ավելի վատ վիճակում է: Նա հավելեց նաև, որ չի կարող մասնագիտական առարկաների հաշվին մտցնել երկրորդ մասնագիտական օտար լեզու: Ըստ մոնիտորինգի արդյունքների, նա հավաստիացրեց, որ ուսանողների մեծ մասը ընտրել է իսպաներենը՝ որպես երկրորդ մասնագիտական օտար լեզու, ինչն էլ ենթադրում է, որ յոթերորդ կիսամյակում նրանք կընտրեն իսպաներենը, ինչի հետևանքով կիսատ չի մնա երկրորդ օտար լեզվի ուսուցումը:

Անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ. պրոֆեսոր Յ.Յերգնկյանը անդրադարձավ ընդհանուր կրթական կառուցամասի չորրորդ կետին, ինչը վերաբերում է օտար լեզու առարկային: Նա ասաց, որ երկու անգամ այդ հարցը մեթոդխորհրդի նիստով քննարկվել է, առաջարկը՝ գրավոր ներկայացվել: Իր կարծիքով արևելյան լեզուների համալրումը մյուս օտար լեզուներին այդքան էլ նպատակահարմար չէ, քանի որ ուսանողը կարող է ընտրել մի այնպիսի լեզու, որը ոչ մի առնչություն չի ունենա իր՝ դրպոցում անցած օտար լեզվի հետ: Ավելի նպատակահարմար է շարունակել իմացած լեզուն: Մեկ տարվա նոր օտար լեզվի ուսուցումից հազիվ թե կարելի է լուրջ արդյունք ակնկալել:

2.Գ.Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին: Նա կրկին խոսքը փոխանցեց փոխդեկան Ն.Մադոյանին, ով խոսեց արտադրական /մասնագիտական/ պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման մասին: Նա ասաց, որ ուսանողների քանակը և հաստատությունները ճշտված են: Ուսանողները գնալու են տարբեր հաստատություններ՝ ըստ իրենց ուղղվածության:

Գ.Բարսեղյանը խոսեց մեկ այլ նկատառման մասին՝ մագիստրատուրայի դասերը առցանց են ընթանում, իսկ միջանկյալները պետք է ընթանան համալսարանում դեմ առ դեմ ձևաչափով:

Գ.Բարսեղյանը անդրադարձավ նաև ամբիոնների լաբորանտների հարցին: Նա ասաց, որ համավարակի ժամանակ նա թույլ էր տվել, որ ամեն ամբիոնում գոնե մեկական լաբորանտ լինի: Բոլոր ֆակուլտետները արդեն անցել են բնականոն հունի, այդ իսկ պատճառով ԵԼՀ ֆակուլտետն էլ բացառություն չի լինի: Շաբաթական հինգ օր մեկ դրույքով լաբորանտը պետք է աշխատի 36 ժամ, կես դրույքով՝ համապատասխան կես

չափաբաժնով: Լաբորանտները պետք է գան աշխատանքի ապրիլի 1-ից ժամը 10:00-ից -17:40, սեպտեմբերից՝ 9:00-16:40:

Միաձայն որոշման արդյունքում որոշեցին՝

- երաշխավորել անգլիական բանասիրության ամբիոնի ներկայացրած «Կիրառական լեզվաբանություն և հաղորդակցություն» մագիստրատուրոսական կրթական ծրագիրը հաստատման:
- երաշխավորել գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ. Գ. Սավոյանի՝ „Das Werden der Kategorie des Genus im Deutschen und Russischen“ - « Մեռի կարգի զարգացումը գերմաներենում և ռուսերենում» մենագրությունը:
- երաշխավորել անգլիական բանասիրության ամբիոնի ապիստենտ, Բ.Գ.Թ Ն.Մադոյանին դոցենտի կոչման ներկայացնելու համար:
- երաշխավորել Ս. Գասպարյանի, Ա. Կնյազյանի և Գ. Բարսեղյանի Academic English: Theory & Practice դասագիրքը տպագրության:
- երաշխավորել միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի դասախոս՝ Բ.Գ.Թ. դոցենտ Մ.Յադուբյանի և նրա համահեղինակ Գ. Հայրապետյանի՝ “*Mass Media Communication*” ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության:

ԵԼՀ ֆակուլտետի

ղեկան և գիտխորհրդի նախագահ,

Բ.Գ.Թ., դոցենտ՝



Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, Բ.Գ.Թ., դոցենտ՝



Մ.Դալայան

16.03.2022թ.